



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/10/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

16 հունվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարությանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի հունվարի 16-ին քննելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախկին անդամ Ռոլանդ Շառոյանի ընտանիքի անդամ՝ Ժասմենա Ռաֆայելի Գրիգորյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/10/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, իրականացրել է Ժասմենա Ռաֆայելի Գրիգորյանի կողմից 2024 թվականի

նոյեմբերի 21-ին ներկայացված «Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2021 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի» հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) վերլուծություն, որի արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Կադաստրի կոմիտեից ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ, ք.Երևան, Կենտրոն [REDACTED] հասցեում գտնվող բնակարանը [REDACTED] միանձնյա սեփականության իրավունքով, ինչպես նաև ՀՀ, Արմավիրի մարզ, [REDACTED] [REDACTED] հասցեում գտնվող անշարժ գույքը [REDACTED] բաժնային սեփականության իրավունքով պատկանում են Ժասմենա Գրիգորյանին: Մինչդեռ, նշված գույքերը հայտարարագրված չեն վերջինիս 2021 թվականի տարեկան հայտարարագրում, ուստի առկա են ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:

2) Ժասմենա Գրիգորյանի 2021 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրված է «Լեգենդա» ՍՊԸ-ից ստացված շահաբաժին՝ 3,600,000 ՀՀ դրամի չափով: Մինչդեռ վերլուծության իրականացման շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերլուծության իրականացման շրջանակներում Հանձնաժողովին նշված շահաբաժինը ստանալու վերաբերյալ տեղեկություն չի տրամադրվել, ուստի առկա է սխալ հայտարարագրված տվյալ:

3) ՀՀ կենտրոնական բանկից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ժասմենա Գրիգորյանի բանկային հաշիվների մնացորդները 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել են 488,861.1 ՀՀ դրամ, 734.95 ԱՄՆ դոլար, 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 199,681.1 ՀՀ դրամ, 711 ԱՄՆ դոլար, մինչդեռ Ժասմենա Գրիգորյանը 2021 թվականի տարեկան հայտարարագրում բանկային հաշիվների մնացորդներ չի հայտարարագրել, ուստի առկա են ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:

4) ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ժամենա Գրիգորյանը 2000 թվականի մարտի 9-ից մինչև 2022 թվականի հուլիսի 22-ը հանդիսացել է «ԼԵԳԵՆԴԱ» ՍՊԸ-ի մասնակից (բաժնեմասի չափը կազմել է 12.5%), մինչդեռ նշված տվյալը վերջինիս կողմից չի ներկայացվել իր 2021 թվականի տարեկան հայտարարագրի «Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, ուստի առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

1.2 Հանձնաժողովը, 2024 թվականի դեկտեմբերի 24-ին ժամենա Ռաֆայելի Գրիգորյանին հասցեագրել է թիվ 01/4292-2024 ծանուցումը ստացվել հրավիրելով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշների հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման՝ նշված գրությունը ստանալուն հաջորդող 7-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին: Նշված գրությունը ժամենա Գրիգորյանը ստացել է 2024 թվականի դեկտեմբերի 27-ին (հիմք՝ AL0125919366AM հետադարձ հանձնման ծանուցագիր):

1.3 2024 թվականի հունվարի 13-ին պատշաճ ծանուցված ժամենա Ռաֆայելի Գրիգորյանի ներկայացուցիչ՝ Սեյրան Մարգարյանի (այսուհետ՝ Ներկայացուցիչ) ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/02/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված ժամենա Գրիգորյանի ներկայացուցիչ ներկայությամբ 2025 թվականի հունվարի 16-ին, ժամը՝ 12:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

2.1 2025 թվականի հունվարի 13-ին վերոնշյալ իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմման ընթացքում Ներկայացուցչի կողմից ներկայացվել են հետևյալ բացատրությունները.

1) Ժասմենա Գրիգորյանի 2021 թվականի տարեկան հայտարարագրում ՀՀ, ք.Երևան, Կենտրոն [REDACTED] հասցեում գտնվող բնակարանը և ՀՀ, Արմավիրի մարզ, [REDACTED] հասցեում գտնվող անշարժ գույքը չհայտարարագրելու առնչությամբ Ներկայացուցիչը նշել է, որ նշված անշարժ գույքերը Ժասմենա Գրիգորյանի կողմից ձեռք են բերվել դեռևս 1998 և 1999 թվականներին և չեն հանդիսանում պաշտոնավարման ընթացքում ձեռք բերված գույքեր, Ժասմենա Գրիգորյանը դրանք թաքցնելու մտադրություն չի ունեցել, Հայտարարագրերի լրացման պահին սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքերի մասին չի հիշել:

2) Ժասմենա Գրիգորյանի 2021 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրված «Լեգենդա» ՍՊԸ-ից ստացված շահաբաժնի՝ 3,600,000 ՀՀ դրամի վերաբերյալ Ներկայացուցիչը նշել է, որ Ժասմենա Գրիգորյանը մինչև 2022 թվականի հուլիսի 22-ը հանդիսացել է «Լեգենդա» ՍՊԸ-ի մասնակից և, միաժամանակ, նույն ընկերությանը վարձակալության իրավունքով հանձնած է եղել Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Շահումյան փողոց 31 հասցեում գտնվող անշարժ գույքը և ստացել է վարձավճարներ: Որպես շահաբաժին հայտարարագրված եկամուտը, ըստ էության, հանդիսացել է վարձավճար: Այսինքն, հայտարարատուի կողմից ոչ թե չի ներկայացվել եկամուտի ստացման փաստը, այլ սխալ տեսակի եկամուտ է հայտարարագրվել:

3) Ժասմենա Գրիգորյանի 2021 թվականի տարեկան հայտարարագրում բանկային հաշիվների մնացորդները չհայտարարագրելու վերաբերյալ

Ներկայացուցիչը նշել է, որ ժամենա Գրիգորյանը դրանք թաքցնելու մտադրություն չի ունեցել, պարզապես հայտարարագրի լրացման պահին չի հիշել թե ինչ դրամական միջոցներ կան իր բանկային հաշիվներում:

4) Ժամենա Գրիգորյանի կողմից՝ 2021 թվականի տարեկան և 2022 թվականի դադարի հայտարարագրերում «ԼԵԳԵՆԴԱ» ՍՊԸ-ում իր ունացած բաժնեմասը չներկայացնելու իրավախախտման վերաբերյալ Ներկայացուցիչը նշել է, որ, քանի որ հայտարարագրում արդեն իսկ նշվել է «Լեգենդա» ՍՊԸ-ի կողմից ստացված շահաբաժինը, ժամենա Գրիգորյանը համարել է այդ տեղեկատվությունը բավարար և որպես գույք չի նշել այդ մասին:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/10/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Ժամենա Ռաֆայելի Գրիգորյանը Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքը» բաժնի Բ.1.1 և Բ.1.3 (Տվյալ տարվա սկզբում և վերջում առկա անշարժ գույքերի դաշտերում) չի ներկայացրել ք. Երևան, Կենտրոն [REDACTED] հասցեում գտնվող բնակարանի և Արմավիրի մարզ, [REDACTED] հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ տվյալները:

3.2 Ժամենա Ռաֆայելի Գրիգորյանը Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքը» բաժնի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» ենթաբաժնում չի ներկայացրել 2000 թվականի մարտի 9-ից մինչև 2022 թվականի հուլիսի 22-ը «Լեգենդա» ՍՊԸ-ում իր ունացած բաժնեմասի վերաբերյալ տվյալները:

3.3 Ժամենա Ռաֆայելի Գրիգորյանը Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքը» բաժնի «Բ.6 Դրամական միջոցներ» ենթաբաժնի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդ» դաշտում չի ներկայացրել իր բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները, որոնք 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել են 488,861.1 ՀՀ դրամ և 734.95 ԱՄՆ դոլար, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 199,681.1 ՀՀ դրամ, 711 ԱՄՆ դոլար:

3.4 Ժամենա Ռաֆայելի Գրիգորյանը Հայտարարագրի «Գ.1 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի եկամուտներ» բաժնի «Գ.1.1 Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում ներկայացրել է «Լեգենդա» ՍՊԸ-ից ստացած շահաբաժին՝ 3,600,000 ՀՀ դրամի չափով, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին նշված շահաբաժինը ստանալու վերաբերյալ տվյալներ չի տրամադրվել:

Հանձնաժողովը հաստատված է համարում, որ հայտարարագրում առկա են ոչ ամբողջական և սխալ ներկայացված տվյալներ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախկին անդամ՝ Ռուլանդ Շառոյանի ընտանիքի անդամ՝ Ժամենա Ռաֆայելի Գրիգորյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ *անշարժ գույքը՝*

հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույք. :

4.3 Նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ բաժնային արժեթղթերը, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, *բաժնեմասը*, փայաբաժինը), ինչպես նաև պարտքային արժեթղթերը (պարտատոմսը, չեկը, մուրհակը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթ, բացառությամբ բանկային վկայագրի):

4.4 Նույն հոդվածի 1-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ դրամական միջոցները (այդ թվում՝ *բանկային հաշիվներում առկա*):

4.5 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում:

4.6 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար: Իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագրում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ:

4.7 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է

հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները: Հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ *գույքի տեսակը*, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, *եկամտի տեսակը*, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ: Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել

է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող *հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:*

Սույն գործով Հաշվի առնելով արձանագրված իրավախախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Ժասմենա Ռաֆայելի Գրիգորյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, դրանք են՝ թվով 2 անշարժ գույքերի, բանկային հաշվի մնացորդների և «Լեգենդա» ՍՊԸ-ում իր բաժնեմասի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև ներկայացրել է սխալ տվյալ՝ որպես եկամուտ հայտարարագրելով «Լեգենդա» ՍՊԸ-ի կողմից ստացված շահաբաժին՝ վարձակալության դիմաց ստացված վճարի փոխարեն, որոնց արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ, մասնավորապես.

Ժասմենա Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը չհայտարարագրելու փաստի առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ իր կողմից նախորդիվ կայացրած որոշումներով (Հանձնաժողովի՝ 2022 թվականի մայիսի 31-ի ՎԻՎ/25/2022, 2022 թվականի հուլիսի 19-ի ՎԻՎ/28/2022 որոշումներ) արձանագրել է, որ Հայտարարագիրը պետք է ներառի հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող բոլոր անշարժ գույքերը: Մինչդեռ, տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվությամբ Հանձնաժողովին ներկայացված թվով 2 անշարժ գույքերի վերաբերյալ նշված տվյալները ներկայացված չեն Ժասմենա Գրիգորյանի Հայտարարագրում, ուստի տվյալ դեպքում առկա չէ արարքը որպես նվազ նշանակություն որակելու հիմք:

Ժասմենա Գրիգորյանի Հայտարարագրում ներկայացված, «Լեգենդա» ՍՊԸ-ից ստացված 3,600,000 ՀՀ դրամ շահաբաժին ստանալու սխալ տվյալ ներկայացնելու իրավախախտման առնչությամբ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Ներկայացուցչի կողմից ներկայացված դիրքորոշումը, համաձայն որի՝ նշված գումարը հանդիսանում է «Լեգենդա» ՍՊ ընկերությանը վարձակալության իրավունքով հանձնած անշարժ գույքի դիմաց ստացված վարձավճար, որը սխալմամբ ներկայացվել է որպես շահաբաժին, գտնում է, որ տվյալ դեպքում, որպես շահաբաժին հայտարարագրված եկամուտը, իրականում ըստ էության, հանդիսացել է վարձավճար, ինչը նշանակում է, որ հայտարարատուի կողմից ոչ թե չի ներկայացվել եկամտի ստացման փաստը, այլ սխալ տեսակի եկամուտ է հայտարարագրվել, որպիսի հանգամանքով պայմանավորված Հանձնաժողովը տվյալ դեպքում էական է համարում, որ Ժասմենա Գրիգորյանի կողմից այնուամենայնիվ ներկայացվել է իր եկամուտը, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ չի տուժել Օրենսգրքի 169.28 5-րդ կետով օրենսդրի հետապնդվողը նպատակը՝ պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն

զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը: Նշված պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ ժամենա Գրիգորյանի կողմից Հայտարարագրում եկամտի տեսակի սխալ հայտարարագրման արարքն ունի նվազ նշանակություն:

Ժամենա Գրիգորյանի Հայտարարագրում բանկային հաշիվների մնացորդները չհայտարարագրելու իրավախախտման առնչությամբ Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կիրառված իրավական պրակտիկային (2021 թվականի մայիսի 4 ՎԻՎ/08/2021, 2021 թվականի մայիսի 19-ի ՎԻՎ/09/2021, 2022 թվականի մայիսի 18-ի ՎԻՎ/15/2022, 2022 թվականի մայիսի 27-ի ՎԻՎ/23/2022, ՎԻՎ/24/2022, 2022 թվականի մայիսի 31-ի ՎԻՎ/26/2022 որոշումներ) որոնցով Հանձնաժողովը սահմանել է էական նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության դեպքում դրամական միջոցների մնացորդների ոչ ամբողջական հայտարարագրումը հանրային հաշվետվողականության տեսանյունից ձեռք է բերում նվազ նշանակություն: Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքը էականորեն տարբերվում է Հանձնաժողովի կողմից որպես նվազ նշանակություն ունեցող իրավախախտում որակված վերը հիշատակված դեպքերից, ուստի տվյալ դեպքում ժամենա Գրիգորյանի կողմից իր բանկային հաշիվների մնացորդների չհայտարարագրումը չի կարող որակվել որպես նվազ նշանակություն ունեցող իրավախախտում:

Ինչ վերաբերում է ժամենա Գրիգորյանի կողմից «ԼԵԳԵՆԴԱ» ՍՊԸ-ում իր ունեացած բաժնեմասը գույքի հայտարարագրում չներկայացնելու իրավախախտմանը, ապա Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ 2022 թվականի մայիսի 14-ի ՎԻՎ/13/2022 որոշմանը, որով Հանձնաժողովը որպես նվազ նշանակություն էր որակել այն դեպքը, երբ պաշտոն զբաղեցնող անձը իր շահերի

հայտարարագրում չէր ներկայացրել իր ընտանիքի անդամի՝ առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ներկայացվածության վերաբերյալ տվյալը, մինչդեռ Հանձնաժողովի կողմից նշված արարքը որակվել էր որպես նվազ նշանակություն այն հիմքով, որ իր ընտանիքի անդամը իր հայտարարագրում՝ որպես եկամուտ, ներկայացրել էր նշված առևտրային կազմակերպությունից եկամուտ ստանալու վերաբերյալ տվյալ: Նշված պայմաններում Հանձնաժողովը գտել էր, որ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամի մասին հայտարարագրված տվյալի և այդպիսի տվյալ հետ փոխկապակցության մեջ գտնվող վերջինիս ընտանիքի անդամի կողմից հայտարարագրված տվյալով ըստ էության բացահայտված է պետական պաշտոն զբաղեցնող անձի հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձի՝ վերջինիս դրստեր առնչությունը առևտրային կազմակերպությանը, որպիսի պայմաններում ուղենշվել է շահերի հայտարարագրման օրենսդրի կողմից սահմանված նպատակը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Ժասմենա Գրիգորյանի կողմից Հայտարարագրում որպես գույք չի ներկայացվել «Լեգենդա» ՍՊԸ-ում ունեցած բաժնեմասը, այնուամենայնիվ եկամուտների հայտարարագրում վերջինիս կողմից ներկայացվել է «Լեգենդա» ՍՊԸ-ի կողմից ստացվող շահաբաժին, որպիսի պայմաններում նշված տվյալի հայտարարագրմամբ ըստ էության բացահայտված է Ժասմենա Գրիգորյանի առնչությունը «Լեգենդա» ՍՊԸ առևտրային կազմակերպությանը, որպիսի պայմաններում Հանձնաժողովն արձանագրում է, որ օրենսդրի կողմից շահերի հայտարարագրմանը ներկայացվող՝ ուղենշված նպատակը չի տուժել, ուստի սույն մասով իրավախախտումն ունի նվազ նշանակություն:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը, և միաժամանակ հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ *(տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի*

երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախկին անդամ՝ Ռուլանդ Շառոյանի ընտանիքի անդամ՝ Ժասմենա Ռաֆայելի Գրիգորյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ժամենա Ռաֆայելի Գրիգորյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ժամենա Ռաֆայելի Գրիգորյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՅԱՆ